

**1951 թ. ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ  
Յարցեր և պատասխաններ**

1951 թ. կոնվենցիան մասամբ նպատակ ուներ լուծելու եվրոպայով մեկ դեռևս սփռված՝ երկրորդ համաշխարհային պատերազմից մնացած բազմաթիվ փախստականների խնդիրները:

**1951 թ. ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ  
Յարցեր և պատասխաններ**

Գունգարացի  
փախստական երեխա՝  
1956 թ.

- 4 Կոնվենցիայի պատմությունը
- 6 1951 թ. կոնվենցիայի կարևորությունը
- 8 Ի՞նչ է պաշտպանությունը
- 9 Փախստականներ և միգրանտներ
- 11 Ներքին տեղահանվածներ
- 15 Ի՞նչ է ժամանակավոր պաշտպանությունը
- 16 Ապաստան հայցողների «ներգրավումը»
- 18 Կա՞ն, արդյոք, երկրներ, որտեղից փախստականներ երբեք չեն լինում

Աղյուսակներ

**11** աղյուսակ 1

Փախստականների թիվը վերջին քառորդ դարում

**17** Աղյուսակ 2

Փախստականների կարգավիճակի մասին 1951 թ. կոնվենցիային և/կամ 1967 թ. Արձանագրությանը միացած երկրները  
*ըստ 2007 թ. սեպտեմբերի 1-ի տվյալների*

Փախստականների պաշտպանությանն ուղղված միջազգային իրավունքի, կոնվենցիաների և ուղենիշների փաթեթի մշակման գործընթացը սկիզբ է առել 20-րդ դարի սկզբին, Միավորված ազգերի կազմակերպության նախորդի՝ Ազգերի լիգայի ներքո: Գործընթացն իր ավարտին հասավ 1951 թ. հունիսին, երբ Միավորված ազգերի հատուկ համաժողովն ընդունեց Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիան:

Կոնվենցիան հստակորեն սահմանում է, թե ով է հանդիսանում փախստական, և թե ինչ կարգի իրավաբանական պաշտպանություն, այլ աջակցություն և սոցիալական իրավունքներ պետք է ընձեռեն նրան Կոնվենցիային միացած պետությունները: Կոնվենցիան նմանապես սահմանում է փախստականների պարտավորություններն իրենց ընդունած կառավարությունների հանդեպ, ինչպես նաև մարդկանց որոշակի կատեգորիաները, օրինակ՝ պատերազմի հանցագործներին, որոնք չեն կարող համապատասխանել փախստականի կարգավիճակին:

Միավորված ազգերի կազմակերպությունը ցանկանում է փախստականների համար երաշխավորել հիմնարար իրավունքներից և ազատություններից լայնորեն օգտվելու հնարավորություն: 1951 թ. կոնվենցիայի ներածություն

Կոնվենցիայի ընդունումից մի քանի ամիս առաջ՝ 1951 թ. հունվարի 1-ին իր աշխատանքն էր սկսել Միավորված ազգերի՝ Փախստականների հարցերով զերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓՉԳԳ) նորաստեղծ գրասենյակը:

Չետագա տասնամյակների ընթացքում վերոհիշյալ փաստաթուղթը դարձավ և մնաց ավելի քան 50 միլիոն փախստականների պաշտպանությանը և աջակցությանը նվիրված՝ այս գործակալության ջանքերի հիմքը:

Ի սկզբանե 1951 թ. կոնվենցիան որոշ չափով սահմանափակվում էր երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքում զոյացած՝ Եվրոպայի փախստականների պաշտպանությամբ, սակայն 1967 թ. Արձանագրությամբ նրա գործունեության ոլորտն ընդարձակվեց, քանի որ տեղահանվածության խնդիրն արդեն դարձել էր համաշխարհային խնդիր: Այս երկու փաստաթուղթը նպաստել են նաև կարևոր տարածաշրջանային փաստաթղթերի ստեղծմանը, ինչպես օրինակ 1969 թ. Աֆրիկյան միասնության կազմակերպության (ԱՄԿ) Փախստականների մասին կոնվենցիան Աֆրիկայում և 1984 թ. Լատինական Ամերիկայի Կարթագենյան հռչակագիրը:

Միացած երկրները պետք է Կոնվենցիայի դրույթները կիրառեն բոլոր փախստականների նկատմամբ՝ առանց խտրականության:  
*Շողված 3*

Ընդհանուր թվով 147 պետություն միացել է ՄԱԿ վերոհիշյալ երկու փաստաթղթերից մեկին կամ երկուսին էլ (տե՛ս էջ 17): Բայց վերջին տարիներին՝ զլոբալ միգրացիայի պատկերի փոփոխությամբ և տեղաշարժվող մարդկանց թվի աճով պայմանավորված, հաճախ սկսել են հարցականի տակ դնել 1951 թ. կոնվենցիայի համապատասխանությունը:

Ներկայումս ՄԱԿ ՓՉԳԳ-ն աջակցություն է ցույց տալիս շուրջ 33 միլիոն մարդկանց, որոնց գրեթե կեսը փախստականներ կամ ապաստան հայցողներ են, և Կոնվենցիան, ապացուցելով արագընթաց

փոփոխությունների ժամանակաշրջանում իր զարմանալի ճկունությունը, դեռևս շարունակում է փախստականների պաշտպանության անկյունաքարը հանդիսանալ:  
1951 թ. կոնվենցիայի վերաբերյալ առավել հաճախ հնչող հարցադրումները ներկայացված են ստորև:

#### **Ո՞Վ Է ՀԱՍԱՐԿՈՒՄ ՓԱՒՍՏԱԿԱՆ**

Կոնվենցիայի Հոդված 1-ը սահմանում է «փախստական» հասկացությունը, որպես.

«անձ, որ գտնվում է իր քաղաքացիության կամ մշտական բնակավայր հանդիսացող երկրից դուրս, հետապնդումից վախենալու հիմնավոր պատճառ ունի՝ ռասայական պատկանելության, դավանանքի, ազգության, որոշակի սոցիալական խմբի պատկանելու, քաղաքական հայացքների պատճառով, և ով ի վիճակի չէ կամ չի ցանկանում օգտվել այդ երկրի պաշտպանությունից կամ վերադառնալ այնտեղ՝ վախենալով հետապնդումից»:

- **Ինչո՞վ է կարևոր Կոնվենցիան**

Կոնվենցիան առաջին իրապես միջազգային համաձայնագիրն է, որ հաշվի է առնում փախստականի կյանքի առավել կարևոր ասպեկտները: Այն հստակորեն ձևակերպում է մարդու հիմնարար իրավունքների մի շարք, որոնք պետք է առնվազն համարժեք լինեն այն ազատություններին, որոնցից օգտվում է որևէ տվյալ երկրում օրինականորեն բնակվող օտարերկրյա քաղաքացին, իսկ շատ դեպքերում նաև տվյալ երկրի քաղաքացին: Այն ճանաչում է փախստականներին առնչվող ճգնաժամերի միջազգային մասշտաբը և խնդրի լուծման համար միջազգային համագործակցության, ներառյալ՝ դժվարությունների բեռը պետությունների միջև կիսելու անհրաժեշտությունը:

**Մեկ շաբաթական աֆղանստանցի տղային գրանցել են Պակիստանում:** Ապահովումը, որպեսզի փախստականներն ունենան բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, ՄԱԿ ՓՀԳՀ-ի՝ աշխարհով մեկ սփռված միլիոնավոր փախստականների պաշտպանությանն ուղղված ջանքերի հանգուցային բաղադրիչն է:

- **Ինչի՞ մասին է 1951 թ. կոնվենցիան**

Կոնվենցիան տալիս է «փախստական» հասկացության սահմանումը: Այնուհետև այն տալիս է փախստականների իրավունքների նկարագիրը, ներառյալ այնպիսիք, ինչպիսիք են դավանանքի, ազատ տեղաշարժման, աշխատանքի, կրթության իրավունքները և ճամփորդական փաստաթղթերի հասանելիությունը: Կոնվենցիան նաև ընդգծում է փախստականների պարտավորություններն իրենց ընդունած կառավարությունների հանդեպ: Հանգուցային դրույթով ամրագրվում է, որ փախստականներին չի կարելի վերադարձնել այն երկիրը, ուր նրանք հետապնդման կարող են ենթարկվել: Կոնվենցիան նաև մասնավորեցնում է այն մարդկանց կամ խմբերը, որոնք ենթակա չեն Կոնվենցիայի պաշտպանությանը:

- **Ինչի՞ մասին է 1967 թ. արձանագրությունը**

Այն վերացնում է աշխարհագրական և ժամանակային սահմանափակումները, որ առկա էին բուն Կոնվենցիայում, և ըստ որոնց փախստականի կարգավիճակ ստանալու համար կարող էին դիմել հիմնականում մինչև 1951 թ. հունվարի 1-ը կատարված իրադարձություններից տուժած եվրոպացիները: Արդյունքում Կոնվենցիան վերածվեց իրոք համընդհանուր փաստաթղթի, որը կարող է օգնել աշխարհի ցանկացած վայրում գտնվող փախստականներին: Աշխարհի պետությունների երեք քառորդից ավելին միացել են թե՛ 1951 թ. կոնվենցիային, թե՛ նրա Արձանագրությանը (*տե՛ս էջ 17*):

Երկու միլիոնից երկուսը. Իրաքից փախստականները Սիրիայի հետ սահմանին:

Պետություններն իրենց տարածք  
ապօրինի մուտք գործելու կամ այնտեղ  
գտնվելու համար չպետք է տուգանքներ  
սահմանեն փախստականների:  
*Հոդված 31*

- **Ի՞նչ է «պաշտպանությունը»**

Հավուր պատշաճի գործող կառավարությունն իր քաղաքացիների համար ապահովում է մի ամբողջ  
շարք քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, մշակութային և հասարակական իրավունքներ և  
ծառայություններ, օրինակ՝ ոստիկանության, օրենսդրության և դատարանների պաշտպանությունը  
հանցագործություններից և հետապնդումներից: Եթե «պետական պաշտպանության» այս համակարգը  
խափանվում է՝ լինի դա պատերազմի, լուրջ խռովությունների կամ այն պատճառով, որ  
կառավարությունն ինքն է հետապնդում իր քաղաքացիների որոշակի խմբերի, հնարավոր է, որ  
բնակչության մի մասը փախչի այլ երկիր: Այդ դեպքում նրանք, ովքեր համապատասխանում են  
«փախստականի» սահմանմանը, ենթակա են «միջազգային պաշտպանության»:

- **Ո՞վ է պաշտպանում փախստականներին**

Առաջին հերթին ապաստանած երկրի կառավարություններն են պատասխանատու փախստականների  
պաշտպանության համար, իսկ Կոնվենցիային և/կամ Արձանագրությանը միացած 147  
պետությունները պարտավոր են կատարել դրանց դրույթները: ՄԱԿ ՓՀԳՀ-ն ունի մաս դիտորդական  
առաքելություն և կարող է անհրաժեշտության դեպքում միջամտել, որպեսզի երաշխավորի  
փախստականին ապաստանի տրամադրումը և թույլ չտա բռնի վերադարձումն այն երկիր, ուր նրա  
կյանքը կարող է վտանգվել: Գործակալությունն ուղիներ է որոնում, որպեսզի փախստականներին  
օգնի նոր կյանք սկսել՝ լինի դա նոր վայրում ինտեգրման, կամուփի հայրենիք վերադառնալու, թե, երբ  
սա անհնար է՝ մեկ այլ երկրում վերաբնակվելու միջոցով:

Պետությունները պարտավոր են  
տարրական կրթության հարցում  
փախստականների հանդեպ  
որդեգրել նույն վերաբերմունքը,  
ինչ և իրենց քաղաքացիների  
հանդեպ:  
*Հոդված 22*

Ապաստան գտնելու՝ փախստականների ջանքերը հաճախ ավելի են դժվարանում միլիոնավոր տնտեսական միգրանտների  
տեղաշարժերի պատճառով: Նկարում ապաստան հայցող կինն իր ճակատագրին է սպասում Սլովակիայի ժամանակավոր  
բնակեցման կենտրոնում:

- **Շարունակու՞մ է, արդյոք, Կոնվենցիան արդիական մնալ 21-րդ դարում**

Այո՛: Այն ի սկզբանե ընդունվել է Եվրոպայում երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքների  
և Արևելք-Արևմուտք աճող լարվածության գիտակցումով: Բայց թեև վերջին կես դարի ընթացքում  
բախումների բնույթը և միգրացիայի պատկերը փոխվել են, պարզվել է, որ Կոնվենցիան զարմանալի  
ճկունությամբ կարողացել է օգնել աշխարհով մեկ սփռված՝ ամենաբազմազան իրավիճակներում  
հայտնված ավելի քան 50 միլիոն մարդկանց: Եվ 1951 թ. կոնվենցիայի կարիքը կզգացվի այնքան  
ժամանակ, քանի դեռ չեն դադարում առանձին մարդկանց և խմբերի հետապնդումները:

- **Կոնվենցիան միտվա՞ծ է, արդյոք, կարգավորելու միգրացիոն տեղաշարժերը**

Ո՛չ: Միլիոնավոր տնտեսական և այլ դրդապատճառներով միգրանտներ օգտվել են վերջին տարիների հաղորդակցական հնարավորությունների բարելավումից, որպեսզի նոր կյանք սկսելու փորձ կատարեն ավելի զարգացած երկրներում: Սակայն նրանց պետք չէ շփոթել (ինչը հաճախ է արվում) փախստականների հետ, ովքեր փրկվում են հետապնդումներից կամ պատերազմից, այլ ոչ՝ տեղափոխվում ֆինանսական կամ անձնական պատճառներով: Ժամանակակից միգրացիոն պատկերները կարող են շատ բարդ լինել և պարունակել «տնտեսական» միգրանտների, փախստականների և այլոց խառնուրդ: 1951 թ. կոնվենցիային համապատասխան ապաստանի հատկացման արդար ընթացակարգերով իրական փախստականներին տարբեր այլ խմբերից տարանջատելը բավական բարդ խնդիր է կառավարությունների համար:

**ՄԱԿ ՓԳԳ-ն օգնում է մի քանի միլիոն ներքին տեղահանվածների, որոնց թվում և այս կանանց՝ Չադում:**  
Սակայն տեղահանվածների այս կատեգորիայի համար գոյություն չունեն հստակ իրավական երաշխիքներ:

- **Ի վիճակ՞ է Կոնվենցիան լուծելու փախստականների խնդիրները**

Մարդիկ փախստական են դառնում իրենց երկրից անհատական կամ զանգվածային հեռացման արդյունքում՝ քաղաքական, կրոնական, ռազմական կամ այլ պատճառներով: 1951 թ. կոնվենցիան չի մշակվել այս պատճառները հաղթահարելու, այլ ավելի շուտ՝ դրանց հետևանքները թեթևացնելու համար՝ տուժածներին որոշ միջազգային իրավական պաշտպանություն, այլ աջակցություն առաջարկելով և արդյունքում նպաստելով, որ նոր կյանք սկսելու հնարավորություն ունենան: Պաշտպանությունը կարող է նպաստ բերել խնդրի հաղթահարման գործին, բայց մարդասիրական աշխատանքը չի կարող փոխարինել ճգնաժամերը կանխելու կամ հաղթահարելու համար քաղաքական գործողություններին:

Յուրաքանչյուր փախստական պարտավորություններ ունի այն երկրի հանդեպ, որում հայտնվել է:  
*Չողված 2*

- **Վերաբերում է, արդյոք, Կոնվենցիան ներքին տեղահանվածներին**

Ո՛չ: «Փախստականների միջազգային պաշտպանության» մեքենան գործի դնելու հիմնական գործոններից մեկը սահմանն անցնելու փաստն է: Հնարավոր է, որ ներքին տեղահանվածներն իրենց բնակության վայրերից փախչեն նույն պատճառներով, ինչ փախստականները, սակայն նրանք դեռևս իրենց երկրի տարածքում են, հետևաբար ենթարկվում են այնտեղի օրենսդրությանը, այլ ոչ՝ փախստականների մասին միջազգային օրենքին: Լայնածավալ քննարկումներ են ընթացել այն բանի վերաբերյալ, թե տեղահանված մարդկանց այս խմբին ով և ինչպես պետք է պաշտպանի: Ինչ վերաբերում է ՄԱԿ ՓԳԳ-ին, ապա նա ներկայումս պաշտոնապես զբաղվում է աշխարհով մեկ մոտավոր հաշվարկներով 24,5 միլիոն ներքին տեղահանվածների շուրջ կեսով, ինչը նախորդ տարիների համեմատ մշանակալիորեն մեծ թիվ է:

- **Ինչո՞վ են տարբերվում փախստականները և տնտեսական միգրանտները**

Տնտեսական միգրանտները սովորաբար իրենց երկիրը լքում են կամովին՝ ավելի լավ կյանքի ակնկալիքով: Եթե նրանք որոշեն տուն վերադառնալ, ապա դարձյալ կգտնվեն իրենց կառավարության

պաշտպանության ներքո: Փախստականները գաղթում են՝ հետապնդումից վախենալով և չեն կարող ապահով տուն վերադառնալ, քանի դեռ իրավիճակի արմատական փոփոխություն տեղի չի ունեցել (օրինակ՝ տևական խաղաղության դաշինք կամ կառավարության փոփոխություն):

**Փախստականների թվերը ողջ աշխարհում**

(Յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ի տվյալներով)

*Այս թվերը ՄԱԿ ՓՉԳՉ այլ փաստաթղթերում կարող են բերված լինել որպես դեկտեմբերի 31-ի տվյալներ: Ներառված են ճշտված տարեվերջյան թվեր:*

Փախստականներ	Տարին	Խնդրո առարկա ողջ բնակչությունը
10.319.000	1983	-
10.621.000	1984	-
10.728.000	1985	-
11.864.000	1986	-
12.634.000	1987	-
13.128.000	1988	-
14.347.000	1989	-
14.733.000	1990	-
17.396.000	1991	-
16.855.000	1992	-
17.838.000	1993	-
16.326.000	1994	-
15.754.000	1995	-
14.896.000	1996	-
13.357.000	1997	-
12.015.400	1998	20.047.700
11.480.900	1999	20.124.700
11.687.200	2000	20.821.800
12.129.600	2001	22.006.100
12.116.800	2002	20.028.900
10.594.100	2003	20.892.500
9.680.300	2004	17.101.300
9.559.100	2005	19.518.400
8.394.400	2006	20.751.900
9.877.000	2007	32.900.000

**Բանգլադեշից կամավոր Մյանմար վերադարձող փախստականներ**

- **Ինչպիսի՞ պարտականություններ ունի փախստականը**  
 Փախստականները պետք է հարգեն իրենց ապաստան տված երկրի օրենքներն ու կանոնադրությունները:
- **Կոմվենցիան պետություններին պարտադրու՞մ է, արդյոք, մշտական ապաստան հատկացնել բոլոր փախստականներին**  
 Կոմվենցիան ավտոմատ մշտական պաշտպանություն չի տրամադրում: Շատ փախստականներ լիովին ինտեգրվել են իրենց ապաստան տված երկրներում, բայց մի մասն էլ դադարում է փախստական համարվել, երբ ապաստան հայցելու իրենց հիմնավորումը դադարում է գոյություն ունենալ:

Փախստականների կամավոր վերադարձը հայրենիք ՄԱԿ ՓՀԳՀ-ի համար «նախընտրելի» լուծում է (և իսկապես ամենից հաճախ հենց այդպես էլ տեղի է ունենում), բայց միայն այն դեպքում, երբ հանգամանքները հնարավոր են դարձնում ապահով վերադարձը:

**1996 թ. ռուսադաջինների 43 կիլոմետրանոց շարայունը ուղևորվում է տուն: Փախստականներին չի կարելի իրենց կամքին հակառակ տուն վերադարձնել, եթե հայրենիքում ապահով չէ:**

Ոչ մի միացած պետություն չի կարող որևէ փախստականի վտարել կամ վերադարձնել այն տարածքների սահման, ուր նրա կյանքին կամ ազատությանը վտանգ է սպառնում:

*Յոթված 33*

- **Կարող են Կոնվենցիային չմիացած երկրները մերժել փախստականների ընդունումը**  
Չվերադարձման սկզբունքը, այն գաղափարը, որ մարդկանց չպետք է բռնի վերադարձնել այն երկրները, ուր նրանք կարող են հետապնդման ենթարկվել, դարձել է միջազգային իրավունքի անբաժան մաս և բոլոր պետությունները ենթարկվում են դրան: Հետևաբար ոչ մի կառավարություն չունի հանգամանքներում չի կարող վտարել որևէ անձի:

- **Ովքե՞ր են զրկված Կոնվենցիայի պաշտպանությունից**  
Ապաստանած երկրից դուրս խաղաղության դեմ, պատերազմական կամ մարդկության դեմ հանցագործություն կամ որևէ ոչ-քաղաքական ծանր հանցագործություն գործած անձինք:

- **Ո՞վ կամ ինչն է համարվում հետապնդում իրականացնող**  
Այս բնութագրումը վերաբերում է այն անհատին կամ կազմակերպությանը՝ կառավարություն, ապստամբների կամ որևէ այլ խումբ, որը մարդկանց ստիպում է լքել իրենց տները՝ փախչել: Հետապնդում իրականացնողի ինքնությունը, այնուհանդերձ, չպետք է որոշիչ լինի անձի՝ փախստականի կարգավիճակին համապատասխանությունը սահմանելիս: Հիմնական գործոնն այն է, թե արժանի՞ է, արդյոք, անձը միջազգային պաշտպանության, քանի որ իր հայրենի երկրում այն չի կարող ստանալ:

**Վերևում՝** Սալվադորից փախստականները Հոնոլուրասում, 1980-ականներին: Կենտրոնական Աֆրիկայի պատերազմների ժամանակ «հետապնդում իրականացնողներ» էին թե՛ կառավարությունը, թե՛ ընդդիմադիր ուժերը:

- **Ի՞նչ է ժամանակավոր պաշտպանությունը**  
Մարդկանց անսպասելի մեծ ներհոսքի պարագայում, երբ ապաստանի հատկացման համակարգը գերծանրաբեռնվում է (ինչպես որ դա տեղի ունեցավ վաղ 1990-ականներին՝ նախկին Հարավսլավիայի հակամարտության ժամանակ), պետությունները կարող են «ժամանակավոր պաշտպանություն» տրամադրել: Նման հանգամանքներում մարդկանց անհապաղ ընդունում են ապահով երկրներ, սակայն առանց երկարատև ապաստանի որևէ երաշխիքի: Այսպիսով՝ «ժամանակավոր ապաստանը» որոշակի հանգամանքներում շահեկան է թե՛ կառավարությունների, թե՛ ապաստան հայցողների համար: Բայց այն ընդամենը լրացնում է, այլ ոչ՝ փոխարինում պաշտպանության ավելի համապարփակ միջոցները, ներառյալ 1951 թ. կոնվենցիայով առաջարկվող՝ փախստականի կարգավիճակի ամբողջական տրամադրումը:

**Աջից՝** Ո՛չ մարտիկներին, ո՛չ զինվորներին 1951 թ. կոնվենցիան Չի վերաբերում:

- **Կարող է զինվորը փախստական համարվել**

Փախստականը քաղաքացիական անձ է: Նախկին զինվորը կարող է փախստական համարվել, բայց ռազմական գործողությունների մասնակից անձը փախստականի կարգավիճակ չի կարող ստանալ:

Պետությունը պարտավոր է ինքնությունը հաստատող փաստաթղթեր տալ իր տարածքում գտնվող յուրաքանչյուր փախստականի: *Հոդված 27*

- **Արդյո՞ք որոշ երկրներ հեղեղված են ապաստան հայցողներով**

Աշխարհի մի շարք երկրներ, այդ թվում նաև Եվրոպայում, կարծում են, թե իրենք հեղեղված են ապաստան հայցողներով: Աշխարհում ապաստան հայցողների թիվն իրոք աճել է 1980-ականներին և 1990-ականներին, սակայն նոր հազարամյակի առաջին տարիներին դարձյալ կտրուկ նվազել է: Առանձին պետությունների մտահոգությունները հարաբերական են: Փաստը հետևյալն է՝ Աֆրիկայի, Ասիայի և Միջին Արևելքի որոշ պետություններ, որոնք, ի դեպ, տնտեսական ռեսուրսների առումով շատ հետ են զարգացած արդյունաբերական երկրներից, երբեմն ավելի երկար ժամանակահատվածներում ընդունում են անհամեմատ մեծ թվով փախստականների:

- **Արդյո՞ք Կոնվենցիային անդամակցման սուկ փաստը ապաստան հայցողների թվի շեշտակի մեծացման գործոն չի հանդիսանում**

Ո՛չ: Կան 1954 թ. կոնվենցիային չմիացած պետություններ, որ փախստականների առավել մեծաթիվ խմբեր են ընդունում: Վերաբնակության վայրի ընտրության հարցում ավելի մեծ դեր ունեն պատմական, աշխարհագրական կամ ազգակցական կապերը:

- Ուժի մեջ մտնելու ամսաթիվը. **22 ապրիլի, 1954 թ.** (*Կոնվենցիա*), **4 հոկտեմբերի, 1967** (*Արձանագրություն*)
- Ըստ **2007 թ. դրությամբ՝ 1951 թ. կոնվենցիային միացած պետությունների թիվը՝ 144**
- **1967 թ. արձանագրությանը միացած պետությունների թիվը՝ 144**
- Երկու փաստաթղթերին՝ **Կոնվենցիային և Արձանագրությանը միացած պետությունների թիվը՝ 141**
- Այս փաստաթղթերից մեկին կամ երկուսին միացած պետությունների ընդհանուր թիվը՝ **147**
- Միայն **1951 թ. կոնվենցիային միացած պետությունները՝ Մադագասկար, Մոնակո, Սենթ-Բիքս և Նևիս**
- Միայն **1967 թ. արձանագրությանը միացած պետությունները՝ Կարո Վերդե, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Վենեսուելա**

**Որոշ եվրոպացիների թվում է, թե իրենց երկրները հեղեղվել են ապաստան հայցողներով:**

Նկարում Իտալիայի առափնյա պահակախումբը Լամպեդուզա կղզու մոտ փրկում է մարդկանց (ովքեր կարող են փախստականներ կամ ապօրինի միգրանտներ լինել):



ՓԱԽԱՏԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ 1951 թ. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՆ ԵՎ/ՎԱՍ 1967 թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՑԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ադրբեջան	Էկվադոր	Հունաստան	Պորտուգալիա
Ալբանիա	Էստոնիա	Հունգարիա	Ջամայկա
Ալժիր	Թիմոր Լեշթի	Ղազախստան	Ջիբութի
Ամերիկայի Միացյալ Նահանգներ	Թունիս	Ղրղզստան	Ռուանդա
Անգոլա	Թուրքիա	Ճապոնիա	Ռումինիա
Անտիգուա և Բարբուդա	Թուրքմենստան	Մադագասկար	Սամոա
Ավստրալիա	Իսլանդիա	Մակեդոնիա (Նախկին Հարավսլ. Հանրապետ.)	Սան Տոմե և Պրինսիպի
Ավստրիա	Իսպանիա	Մալավի	Սեյշելներ
Արգենտինա	Իռլանդիա	Մալի	Սենեգալ
Աֆղանստան	Իսրայել	Մալթա	Սենթ Վինսենթ և Գրենադիներ
Բահամա	Իտալիա	Մավրիտանիա	Սենթ-Քիթս և Նևիս
Բելառուս	Իրան (Իսլամական Հանրապետություն)	Մարոկկո	Սերբիա
Բելգիա	Լատվիա	Մեքսիկա	Սիերա Լեոնե
Բելիզ	Լեհաստան	Միացյալ Թագավորություն	Սլովակիա
Բենին	Լեսոտո	Մոզամբիկ	Սլովենիա
Բոլիվիա	Լիբերիա	Մոլդովա	Սոլոմոնյան Կղզիներ
Բոսնիա և Հերցեգովինա	Լիխտենշտեյն	Մոնակո	Սոմալի
Բոտսվանա	Լիտվա	Մոնտենեգրո	Սվազիլենդ
Բրազիլիա	Լյուքսեմբուրգ	Յեմեն	Սուդան
Բուրկինա Ֆասո	Խորվաթիա	Նիգեր	Սուրինամ
Բուլղարիա	Կաբո Վերդե	Նիգերիա	Վատիկան
Բուրունդի	Կամբոջա	Նամիբիա	Վենեսուելա
Գաբոն	Կամերուն	Նիդերլանդներ	Վրաստան
Գամբիա	Կանադա	Նիկարագուա	Տաջիկստան
Գանա	Կենտրոնական Աֆրիկայի Հանրապետություն	Նոր Զելանդիա	Տանզանիա (Միացյալ Հանրապետություն)
Գերմանիա	Կիպրոս	Նորվեգիա	Տոգո
Գվատեմալա	Կոլումբիա	Շվեդիա	Տրինիդադ և Տոբագո
Գվինեա	Կոնգո	Շվեյցարիա	Տուվալու
Գվինեա Բիսաու	Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետություն	Չադ	Ուգանդա
Դանիա	Կոստա Ռիկա	Չեխիայի Հանրապետություն	Ուկրաինա
Դոմինիկա	Կոտ Դիվուար	Չիլի	Ուրուգվայ
Դոմինիկյան Հանրապետություն	Կորեա (Հանրապետություն)	Չինաստան	Քենիա
Եգիպտոս	Հաիթի	Պանամա	Ֆիլիպիններ
Եթովպիա	Հայաստան	Պապուա Նոր Գվինեա	Ֆինլանդիա
Ջամբիա	Հասարակածային Գվինեա	Պարագվայ	Ֆիջի
Ջիմբաբվե	Հարավային Աֆրիկա	Պերու	Ֆրանսիա
Էլ Սալվադոր	Հոնդուրաս	Ռուսաստանի Դաշնություն	

- **Արդյոք միացունը չի՞ խաթարում պետության Ինքնիշխանությունը**

Ինքնիշխանությունը երբեք բացարձակ չէ: Փախստականների վերաբերյալ փաստաթղթերը հաշտեցնում են պետության շահերը և մարդու իրավունքների պաշտպանությունը: Օրինակ, ապաստանի տրամադրումը ներառված չէ փախստականների մասին փաստաթղթերի մեջ և շարունակում է հանդիսանալ առանձին պետությունների որոշման խնդիր: Մյուս կողմից՝ *վերադարձումը* միանշանակորեն արգելված է (*տե՛ս էջ 13*):

- **Կարո՞ղ է որևէ պետություն «ապահով» հռչակվել այն հիմքով, որ այնտեղ փախստականներ չեն գոյանում**

Ո՛չ: Դիտարկման ենթական են մինչև իսկ այն պետության քաղաքացիների ապաստանի հայցերը, որոնցում գրեթե բացակայում է հետապնդման վտանգը, քանի որ շեղումներ կարող են լինել նույնիսկ ամենաբարյացակամ հասարակություններում: Սակայն այսպիսի հայցերը կարող են դիտարկվել «արագացված կարգով», որի պարագայում, այնուհանդերձ, ապաստանի հայցը պետք է արդար քննության արժանանա:

- **Ինչպե՞ս կարող է միանալու փաստը ներկայացվել տվյալ կառավարությանը կամ բնակչությանը**

Ներքին որոշ մտահոգությունների պատճառը թյուրըմբռնումն է: Կոնվենցիան և Արձանագրությունը սոսկ ընդհանուր իրավական հենք են առաջարկում, որի վրա պետությունները կարող են մշակել փախստականների վերաբերյալ իրենց սեփական քաղաքականությունը: Կառավարությունների վրա դրված պարտավորությունները բոլորովին էլ այնքան սահմանափակող չեն, ինչպես երբեմն ենթադրում են: Փախստականների սոսկ հանդուրժումը՝ առանց նրանց ներկայության իրավական հիմքի ամրագրման, կարող է անհստակություն առաջացնել, ինչն էլ, իր հերթին կարող է խնդիրներ առաջացնել թե՛ փախստականների, թե՛ նրանց ընդունած հասարակության համար:

Փախստականներին պետք է ընծեռնվի նույն ազատությունը, ինչ և քաղաքացիներին՝ իրենց կրոնը դավանելու... (և) իրենց երեխաների կրոնական կրթությունն ապահովելու համար: *Չորված 4*

**Փախստականները՝ Լաոս վերադարձից շատ չանցած:** Վերադարձը հայրենիք փախստականների համար ամենապարզ և սովորաբար լավագույն լուծումն է:

Չրատարակված է.  
ՄԱԿ ՓՉԳՉ  
Մեդիա հարաբերությունների և  
հասարակական տեղեկատվության ծառայություն  
P.O. Box 2500  
1211 Geneva 2  
Switzerland  
[www.unhcr.org](http://www.unhcr.org)  
Տեղեկությունների և հարցերի համար  
խնդրում ենք կապվել.  
Մեդիա հարաբերությունների և  
հասարակական տեղեկատվության ծառայություն,  
[hqpioo@unhcr.org](mailto:hqpioo@unhcr.org)